Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2025 թ. սեպտեմբերի 9-ին կայացած թիվ 2 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2025 թ. սեպտեմբերի 9-ին կայացած թիվ 2 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը:

Գիտական խորհրդի 32 անդամներից գիտական խորհրդի նիստին մասնակցել են 21-ը:

Կ. Ղազարյանի կողմից առաջարկված օրակարգը դրվեց քվեարկության և այն հաստատվեց միաձայն:

Օրակարգում՝

1. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման հարցը:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի առկա ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
3. Կենսաբանության ֆակուլտետում պրոֆեսորադասախոսական կազմի օգնական ներգրավելու հարցը:
4. ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար կենսաբանության ֆակուլտետից թեկնածուների առաջադրման հարցը:
5. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc» ծրագիր 2023» մրցույթի շրջանակներում իրականացվող Աբիիշեկ Սինխի «Կանաչ նանոտեխնոլոգիաները որպես մշակաբույսերի արտադրության նպատակով գյուղատնտեսական հողերի աղակալումը կանխարգելելու և արդիական էկոլոգիական հիմնախնդիրը լուծելու մոտեցում» գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվության հարցը:
6. ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ — ՄՀ ՀՄԱԳ — 2026» Հայաստան-Մոլդովա համագործակցության միջազգային մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած նախագծի երաշխավորության հարցը:
7. ԵՊՀ-ի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, դոցենտ, կ.գ.դ. Աննա Արշակի Փոլադյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:
8. Ընթացիկ հարցեր:

Օրակարգը հաստատելուց հետո նախագահը անցավ հարցերի քննարկմանը:

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտներ Դիանա Համլետի Ղևոնդյանը (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Հ.Հ. Փանոսյան), Սոնա Հազարապետի Նիկոլյանը (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Ա.Ա. Փոլադյան), հայցորդներ Ջեմմա Գուրգենի Մանոյանը (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Լ.Ս. Գաբրիելյան), Լուսինե Յուրիի Մարգարյանը (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Կ. Ա. Թոչունյան), կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Սվետլանա Վահագնի Գրիգորյանը (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Մ. Ա. Փարսադանյան), էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի հայցորդ Սուսաննա Վալոդիայի Անտոնյանը (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյան), գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հեռակա ասպիրանտ՝ Հովհաննես Անդրանիկի Իգիթյանը (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Մ. Հարությունյան): Ասպիրանտները և հայցորդները ներկայացրեցին հաշվետու տարում կատարած աշխատանքները: Ստորև ներկայացվում են համառոտ հաշվետվությունները:

<u>Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոն</u>

1. **Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Դիանա Համլետի Ղևոնդյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Հ. Հ. Փանոսյան):**

2024-2025 ուստարվա ընթացքում հանձնել է մասնագիտական քննության 1-ին և 2-րդ բաղադրիչները:

Հաջողությամբ շարունակել է ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և Գիտության կոմիտեի կողմից տրամադրված «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2023» մրցույթի «Թերմոֆիլների կողմից արտաբջջային պոլիմերային միացությունների արտադրության ուսումնասիրում. բաղադրության և բնապահպանական կիրառությունների պատկերացումներ» թեմայի աշխատանքները: Նշվեց, որ սույն թվականի հուլիսի 14-19-ը մասնակցել է Միլանում (Իտալիա) կայացած Եվրոպական մանրէաբանական ընկերությունների ֆեդերացիայի FEMS2025 համագումարին: Գիտաժողովին մասնակցելու համար դիմել և ստացել է FEMS մասնակցության և ԵՊՀ ճանապարհորդական դրամաշնորհներ: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են FEMS 2025 համագումարին ստենդային զեկուցմամբ՝ «Chemical and genomic insights into extracellular polymeric substances by *Brevibacillus thermoruber* strain Tatev 9-4 isolated from an Armenian geothermal spring» վերնագրով: Տպագրվել է 3 հոդված, ևս մեկը ներկայացված է տպագրության:

2. **ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի՝ չորրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սոնա Հազարապետի Նիկոլյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Ա. Ա. Փոլադյան):**

2023 թվականի հոկտեմբերից հանդիսանում է ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ 23AA-1F036 ծածկագրով «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության» ծրագրի շահառու:

2025թ.-ի հուլիսի 14-17-ը մասնակցել է FEMS MICRO 2025 (Միլան, Իտալիա) գիտաժողովին՝ հանդես գալով պաստեռային զեկուցմամբ:

2025 թվականի սեպտեմբերի 2-ին ընդունվել է տպագրության «Heavy Metal-Resistant Bacterial Communities in the Artsvanik Tailing Dump» վերնագրով հոդվածը Current Microbiology (Q2) ամսագրում, իսկ «Fe (III) Ions Effect on Hydrogenase Activity And Growth of the *Cupriavidus Necator* H16 Strain in Diverse Growth Media» վերնագրով հոդվածը գտնվում է գրախոսման փուլում «Microbiological Journal» ամսագրում:

3. **ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Ջեմմա Գուրգենի Մանոյան (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Լ. Ս. Գաբրիելյան):**

Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել է 1 հոդված Q1 քառորդի ամսագրում, ինչպես նաև 2 գիտաժողովի նյութ: Պաստառային զեկուցմամբ հանդես է եկել «Ամենամյա ամփոփիչ գիտաժողով 2024»-ին «Արդյունաբերական թափոնների կիրառությունը կանաչ ջրիմուռներում կենսազանգվածի և կենսաջրածնի ստացման համար» թեմայով:

Հաշվետու ժամանակահատվածում (հուլիսի 12-ից 15-ը, 2025) պաստառային զեկուցմամբ հանդես է եկել Federation of European Microbiological Societies, FEMS MICRO գիտաժողովին (Միլան, Իտալիա):

Հայցորդի կողմից տպագրվել է 13 գիտական հոդվածներ, որից 6-ը ազդեցության բարձր գործակցով միջազգային ամսագրերում:

4. **ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Լուսինե Յուրիի Մարգարյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Կ. Ա. Թոչունյան) :**

2024-2025 ուսումնական տարվա ընթացքում հավաքել է 30 կրեդիտ՝ 32 հնարավորից: Մասնակցել է Մատենադարանում կայացած «Հիշողության կերպարանքները» համաժողովին, պատրաստվում է պոստերային զեկուցմամբ հանդես գալ սեպտեմբերի 24-26 ԵՊՀ ում կայանալիք կոնֆերանսին: Մեկ հոդված (Q1) համահեղինակությամբ գրախոսության ընթացքում է, մյուսը՝ միահեղինակ՝ ընթացքում է և շուտով կուղարկվի տպագրության:

<u>Կենսաֆիզիկայի ամբիոն</u>

5. **ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Սվետլանա Վահագնի Գրիգորյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Մ. Ա. Փարսադանյան):**

Նշվեց, որ Ս. Գրիգորյանը այս տարվա ընթացքում հավաքել է 6 կրեդիտ /անհրաժեշտ կրեդիտները լրացվել են/: Հաշվետու ժամանակաշրջանում նրա հեղինակությամբ հրատարակվել է 1 միջազգային գիտաժողովի թեզիս: Ս. Գրիգորյանը ավարտում է ատենախոսական թեզի ձևակերպումը:

Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոն

6. **ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի հայցորդ Սուսաննա Վալոդիայի Անտոնյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյան):**

Սուսաննա Անտոնյանը (գիտական թեմա՝ «Նոր սերնդի բնապահպանական տեխնոլոգիաներ հողի վերականգնման և մշակաբույսերի արտադրողականության բարձրացման համար՝ ծանր մետաղներով առաջացրած սթրեսի պայմաններում. ԿՆՋ ճանապարհային քարտեզ») 2024-2025 ուստարվա ընթացքում կատարել է օրացույցային պլանով նախատեսված բոլոր աշխատանքները և հավաքել է անհրաժեշտ 32 կրեդիտ: Ս.Վ. Անտոնյանը կատարել է գրականության մշակում հետազոտվող թեմայի վերաբերյալ, իրականացրել է լաբորատոր հետազոտություններ և տիրապետում է փորձերի մեթոդաբանությանը:

Գենետիկայի և բջջաբանության ամբիոն

7. **ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հեռակա ասպիրանտ՝ Հովհաննես Անդրանիկի Իգիթյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Մ. Հարությունյան):**

Հ.Ա. Իգիթյանը կատարել է պլանով նախատեսված աշխատանքները: Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրել է ապտամերների ազդեցությունը ԴՆԹ վնասվածքների մակածման վրա ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հետ համատեղ: Հ.Ա. Իգիթյանը ընդհանուր պատրաստվածության կրթամասից հանձնել է «Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն», «Անգլերեն», «Անձնային աճ և ինքնակարգավորում, «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ», «Համալսարանական դասավանդման դիդակտիկա», հավելյալ՝ «Գեոծրագրավորում, Պիթոն» և «Գեովիզուալիզացիա և թվային քարտեզագրություն» առարկաները: Այս կրթամասից ստացել է 20 և հավելյալ 7 կրեդիտ:

Դիմել է ֆինանսավորման ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Ասպիրանտների և Երիտասարդ Հայցորդների Հետազոտությունների Աջակցության Ծրագիր - 2025» շրջանակներում «Նոր ապտամերներ՝ որպես խոզի աֆրիկյան ժանտախտի վիրուսի դեմ հակավիրուսային, գենաթունային և բջջաթունային պոտենցիալ միջոցներ» գիտական թեմայի իրականացման համար:

Հ.Ա. Իգիթյանը հավաքել է իր թեմայի վերաբերյալ գիտական գրականություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում՝ (2024-2025թթ.) ասպիրանտների կողմից կատարած ուսումնական և հետազոտական աշխատանքները և ամբիոնների կարծիքները, ատեստավորել հեռակա ուսուցմամբ ասպիրանտներին և հայցորդներին:

2. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., դոցենտ Աննա Արշակի Փոլադյանը, կենդանաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա. Ս. Ղազարյանը, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ս.Ս. Եսոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Ռիմա Հարութիկի Ավետիսյանի** թեկնածուական ատենախոսության թեման «*Cupriavidus* ցեղի մանրէների հակազդման մեխանիզմները միջավայրի աբիոտիկ սթրեսների պայմաններում. հիդրոգենազների և կենսաէներգետիկ հիմնական ֆերմենտների դերակատարումը» **Գ.00.04 «Կենսաքիմիա»** մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել կ.գ.դ., դոցենտ Աննա Փոլադյանին:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Գոհար Սարգսի Ազբեկյանի** թեկնածուական ատենախոսության թեման «Քացախաթթվի ազդեցությունը *Saccharomyces cerevisiae* խմորասնկի տարբեր շտամների կենսաքիմիական և կենսաէներգետիկական ցուցանիշների վրա՝ խմորման և շնչառության պայմաններում, կախված միջավայրի pH-ից» **Գ.00.04 «Կենսաքիմիա»** մասնագիտությամբ և գիտական ղեկավարներ նշանակել կ.գ.դ., պրոֆեսոր Կարեն Թոչունյանին և դոցենտ Նիկոլետա Գուարագնելլային:
3. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Լիլիթ Գնելի Գրիգորյանի** թեկնածուական ատենախոսության թեման «Մրջնաթթվային անցքուղիների և մրջնաթթուջրածինլիազ համալիրների փոխազդեցությունը աղիքային ցուպիկում խմորման պայմաններում» **Գ.00.04 «Կենսաքիմիա»** մասնագիտությամբ և գիտական ղեկավարներ նշանակել կ.գ.դ., պրոֆեսոր Կարեն Թոչունյանին և պրոֆեսոր Գերի Սովերսին:
4. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Անի Ալեքսանդրի Հարությունյանի** թեկնածուական ատենախոսության թեման «*Arthrospira platensis* ցիանաբակտերիայից նանոմասնիկների կենսասինթեզը և դրանց ֆիզիկաքիմիական ու կենսաբանական հատկությունների ուսումնասիրությունը» **Գ.00.04 «Կենսաքիմիա»**

մասնագիտությամբ և գիտական ղեկավարներ նշանակել կ.գ.թ., դոցենտ Լիլիթ Գաբրիելյանին:

5. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի առկա ասպիրանտ **Սակշի Սինխի** թեկնածուական ատենախոսության թեման «Կենսաածուխի դերը ցորենի (*Triticum aestivum L.*) և գարու (*Hordeum vulgare L.*) մորֆո-ֆիզիոլոգիական և կենսաքիմիական դիմադրողականության բարձրացման գործում աղակալվածության և չորային սթրեսի պայմաններում» **Գ.00.05 «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա»** մասնագիտությամբ: Գիտական ղեկավար նշանակել կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանին:
6. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի առկա ասպիրանտ **Արևիկ Անդրանիկի Ղոմաջյանի** թեկնածուական ատենախոսության թեման «Վնասատու թեփուկաթևավորների էկոլոգիան և բազմազանությունը Հայաստանում» **Գ.00.08 «Կենդանաբանություն, մակաբուծաբանություն, էկոլոգիա»** մասնագիտությամբ: Գիտական ղեկավար նշանակել կ.գ.դ., պրոֆեսոր Մ. Ս. Առաքելյանին:

3. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության և կենդանաբանության ամբիոններում պրոֆեսորադասախոսական կազմի օգնականի ներգրավելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, բուսաբանության և սնկաբանության, կենդանաբանության ամբիոնների վարիչները և առաջադրվեցին որպես պրոֆեսորի օգնական՝

- Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Մարգարիտա Գևորգի Մկրտումյանի թեկնածությունը որպես վերոնշյալ ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Ս. Գ. Նանագյուլյանի օգնական:
- Կենդանաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Արևիկ Անդրանիկի Ղոմաջյանի թեկնածությունը որպես վերոնշյալ ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Մ.Ս. Առաքելյանի օգնական:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Մարգարիտա Գևորգի Մկրտումյանին ներգրավել կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյանի օգնական:
- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Արևիկ Անդրանիկի Ղոմաջյանին որպես վերոնշյալ ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Մ. Ս. Առաքելյանի օգնական:

4. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների

տրամադրման մրցույթին մասնակցելու համար կենսաբանության ֆակուլտետից թեկնածուների առաջադրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Նա առաջարկեց *Նորայր Միսակյանի* անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանող Գայանե Ռուդիկի Նազարյանին: *Լևոն Օրբելու* անվան կրթաթոշակը Կ.Ա. Ղազարյանը առաջարկեց հատկացնել կենսաբանության ֆակուլտետի «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» բակալավրիատի կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանող Դիանա Արմենի Դարբինյանին, իսկ *Արմեն Թոչունյանի* անվան կրթաթոշակի համար առաջադրվում է կենսաբանության ֆակուլտետի «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» բակալավրիատի կրթական ծրագրի III կուրսի ուսանող Մարի Արթուրի Գասպարյանի թեկնածությունը, հաշվի առնելով նրանց բարձր առաջադիմությունը, տեսական գիտելիքները և գործնական հմտությունները, ինչպես նաև ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ *Նորայր Միսակյանի* անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանող Գայանե Ռուդիկի Նազարյանին:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ *Լևոն Օրբելու* անվան կրթաթոշակը հատկացնելու համար առաջարկել կենսաբանության ֆակուլտետի «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» բակալավրիատի կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանող Դիանա Արմենի Դարբինյանի, իսկ *Արմեն Թոչունյանի* անվան կրթաթոշակի համար՝ կենսաբանության ֆակուլտետի «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» բակալավրիատի կրթական ծրագրի III կուրսի ուսանող Մարի Արթուրի Գասպարյանի թեկնածությունները:

5. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc» ծրագիր 2023» մրցույթի շրջանակներում իրականացվող Աբիիշեկ Սինխի «Կանաչ նանոտեխնոլոգիաները որպես մշակաբույսերի արտադրության նպատակով գյուղատնտեսական հողերի աղակալումը կանխարգելելու և արդիական էկոլոգիական հիմնախնդիրը լուծելու մոտեցում» գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, թեմայի ղեկավար Աբիիշեկ Սինխը: Նրանք նշեցին, Նախագիծը իրականացման ընթացքում իրականացվել է պլանով նախատեսված բոլոր աշխատանքները: Մասնավորապես ուսումնասիրվել է աղային սթրեսի պայմաններում ցինկի օքսիդի (ZnO-NPs) ու սիլիցիումի երկօքսիդի նանոմասնիկների (SiO_2-NPs) և կենսաածուխի ազդեցությունը ցորենի տեղական տարբեր գենոտիպեր ծլողունակության և որոշ վեգետացիոն ցուցանիշների վրա: Հետազոտությունների

արդյունքում պարզվել է, որ սերմերի նանոմասնիկներով և հողի կենսաածուխով մշակումները բարելավել են ցորենի ծլման ցուցանիշները, կենսունակության ինդեքսը և աղի հանդեպ դիմադրությունը, ինչպես նաև բացահայտվել է, որ ZnO-NPs–ը ցուցաբերել է ավելի ուժեղ ազդեցություն SiO_2-NPs–ի համեմատ: Նանոմասնիկների և կենսաածուխի համակցված օգտագործումը կարող է հանդիսանալ որպես աղի սթրեսի կառավարման խոստումնալից և կայուն ռազմավարություն: Դրամաշնորհի իրականացման ընթացքում հրատարակվել են 21 գիտական հոդվածներ, 26 գրքի գլուխ, 5 խմբագրված գրքեր, որոնք բոլորը ինդեքսավորված են *Scopus*-ում, ինչպես նաև 1 մենագրություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ վերոհիշյալ թեմայի օրացուցային պլանով նախատեսված աշխատանքները համարել ավարտված:

6. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ — ՄՀ ՀՄԱԳ — 2026» Հայաստան-Մոլդովա համագործակցության միջազգային մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած նախագծերի երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Առաջարկվող նախագծերի ղեկավարները՝

Կենդանաբանության ամբիոնի վարիչ, կ. գ. թ. Աստղիկ Սամվելի Ղազարյանը, նա ներկայացրեց նախագիծը «Մարդածին և կլիմայական փոփոխությունների համատեքստում ձեռքաթևավորների հազվագյուտ տեսակների ներկայիս վիճակը Հայաստանում և Մոլդովայում» թեմայով: Աստղիկ Ղազարյանի կողմից նշվեց, որ ձեռքաթևավորները կարևոր դեր ունեն էկոհամակարգերի կայունության ապահովման գործում՝ մասնակցելով միջատների պոպուլյացիաների կարգավորմանը և կենսաբազմազանության պահպանությանը: Սակայն վերջին տասնամյակներում Հայաստանի և Մոլդովայի տարածքում հանդիպող հազվագյուտ չղջիկների տեսակները լուրջ սպառնալիքների առաջ են կանգնած: Մարդածին գործոնները, ինչպիսիք են բնակավայրերի քայքայումը, չկարգավորված տուրիզմը քարանձավներում, արդյունաբերական ու գյուղատնտեսական գործունեությունը, ինչպես նաև կլիմայական փոփոխությունները, նպաստում են դրանց պոպուլյացիների նվազմանը: Այս ծրագիրը նպատակ ունի համապարփակ դաշտային հետազոտությունների և գիտական գործուղումների միջոցով բացահայտել ու գնահատել երկու երկրներում հանդիպող վտանգված տեսակների ներկայիս վիճակը: Բացի դրանից, նախատեսվում է կազմակերպել համատեղ աշխատաժողովներ և թրեյնինգներ՝ ուղղված մասնագիտական կարողությունների զարգացմանը և ակուստիկ մեթոդների կիրառմանը նրանց տարբեր միջավայրերում նույնականացնելու, բացահայտելու, ինչպես նաև վտանգված տեսակների արդյունավետ պահպանության համար: Ծրագրի իրականացումը կնպաստի ոչ միայն Հայաստանի և Մոլդովայի գիտական համագործակցության ամրապնդմանը, այլև տարածաշրջանային մակարդակով կենսաբազմազանության պահպանության ընդհանուր ռազմավարությունների մշակմանը:

Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ Աննա Ֆելիքսի Կարապետյանը, նա ներկայացրեց նախագիծը «Հայաստան–Մոլդովա միջդիսցիպլինար հետազոտություն. նանոմասնիկների թունաբանական գնահատումը սննդի անվտանգության համատեքստում» թեմայով: Աննա Կարապետյանի կողմից նշվեց, որ Հայաստան–Մոլդովա համատեղ նախագիծը նպատակ ունի գնահատել արհեստական և բնական նանոմասնիկների թունաբանական ազդեցությունները կայուն գյուղատնտեսության և սննդի անվտանգության համատեքստում: Սննդի փաթեթավորման, պահպանման համակարգերում և հավելումներում դրանց աճող կիրառությունը հրատապ է դարձնում կենսաբանական անվտանգությունը գնահատելը բջջային և համակարգային մակարդակներում: Մոլդովական խումբը մասնագիտացած է նանոմասնիկների սինթեզի և կենսաֆունկցիոնալացման մեջ, խումբն ունի փոխլրացնող փորձագիտական ներուժ՝ հյուսվածաբանության, իմունոլոգիայի, ֆիզիոլոգիայի և տոքսիկոլոգիայի ոլորտներում: Խումբն ունի մեծ ներուժ կենդանիների մոդելների կիրառման մեջ՝ կենսական օրգանների մորֆոլոգիական և ֆունկցիոնալ փոփոխությունները գնահատելու համար տարբեր թունավոր նյութերի ազդեցության պայմաններում՝ միկոտոքսինների, օքսիդատիվ ստրեսի և հիպոքսիայի հետազոտության ոլորտներում:

Նախագծի շրջանակներում կիրականացվեն in vivo թունաբանական ուսումնասիրություններ՝ կիրառելով հյուսվածաբանական և իմունահիստոքիմիական մեթոդներ՝ բացահայտելու սուր և քրոնիկ ազդեցությունները: Ակնկալվում է ստանալ հավաստի տվյալներ նանոմասնիկների թունաբանության վերաբերյալ, նպաստել սննդային անվտանգության նոր ստանդարտների մշակմանը, ամրապնդել գիտական համագործակցությունը և պատրաստել երիտասարդ հետազոտողներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոհիշյալ նախագծերը մրցույթին մասնակցելու համար:

7. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ-ի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., դոցենտ Աննա Արշակի Փոլադյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա.Ղազարյանը, ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ, կ.գ.թ. Լ.Ս. Գաբրիելյանը, ով ծանոթացրեց գիտական խորհրդի անդամներին թեկնածուի անձնական գործին: Լ.Ս. Գաբրիելյանը նշեց, որ մրցութային հանձնաժողովը հաշվի առնելով Ա.Ա. Փոլադյանի գիտամանկավարժական ակտիվ գործունեությունը և ամբիոնի դրական կարծիքը, երաշխավորում է Աննա Արշակի Փոլադյանին սկսել պրոֆեսորի կոչում ստանալու գործընթացը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հիմք ընդունելով ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 3. 6. 1)ա. կետը, երաշխավորել Ա.Ա. Փոլադյանին՝ պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար:

8.ԼՍԵՑԻՆ՝ ֆակուլտետի ուսումնական և գիտական գործընթացի հետ կապված որոշ ընթացիկ հարցեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ «Կենսաբանություն» ԳՀԻ տնօրեն կ.գ.դ., պրոֆ. Կ.Ա. Թոչունյանը, ով ներկայացրեց ԵՊՀ-ի գիտական կազմի պաշտոնների մրցութային ընտրության անցկացման կարգը և ժամկետները: Նրա կողմից նշվեց, որ սույն թվականի հոկտեմբերի 6-15-ը ընկած ժամանակահատվածում Կարգին համաձայն պետք է նշանակվի և անցկացվի մրցութային ընտրություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Նա անդրադարձավ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 90-ամյա և կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի 10-ամյա հոբելյանների առթիվ սեպտեմբերի 24-26-ը Երևանում կայանալիք միջոցառմանը և ներկաների հետ քննարկեց գիտաժողովի անցկացմանը վերաբերող որոշ հարցեր:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ՝ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ Ի.Վ. Շահազիզյան